ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվար 2024 թվականի N:64 -Ա ք.Գյումրի

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 10 ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի N 136-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչի ներդրման լավագույն փորձի խրախուսման ընթացակարգ»-ի (այսուհետ՝ Ընթացակարգ) 2-րդ բաժնի 2-րդ պարբերության դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից հանրակրթության պետական չափորոշիչի ներդրման լավագույն փորձի խրախուսմանն ուղղված 10 անվանակարգերում լավագույն աշխատակիցներ

ընտրելու հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անվանական կազմը՝ համաձայն Հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահին՝

ա) կազմակերպել հանձնաժողովի աշխատանքները համաձայն Ընթացակարգի:

բ) յուրաքանչյուր անվանակարգից ընտրված երկու լավագույն մասնակիցների մասին տեղեկատվությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 12-րդ աշխատանքային օրը ներառյալ ներկայացնել կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ) հիմնադրամին:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

27 փետրվարի 2024 թվականի N 64 -Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 10 ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Աննա Մարտիկյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Նարինե Ղազարյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,
Հրայր Կարապետյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Գևորգ Ղումաշյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
Արմեն Ստամբոլցյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է